# ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

## ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

*Նշանավոր հայագետ Գարեգին Հովսեփյանի ստորև հրապարակվող նամակները՝ հասցեագրված բանասեր Տիրայր վարդապետին, որի ջանքերով աշխարհում ցրված հայկական ձեռագրերից հավաքվեցին և առանձին ժողովածուով և ուսումնասիրություններով հրատարակվեցին Ֆրիկի ստեղծագործությունները, հետաքրքիր տեղեկություններ են պարունակում Գ. Հովսեփյանի բանասիրական գործունեության մասին։ Նամակներից պարզվում է, որ Գ. Հովսեփյանը էջմիածնից մեկնել է Երուսաղեմ, Կ. Պոլիս, Բեռլին և այլ վայրեր, այնտեղի ձեռագրատներում և դրադարաններում եղած հայերեն ձեռագրերը և գրքերը ուսումնասիրելու՝ ձեռագրերի հիշատակարանները, հայկական մանրանկարչության վերաբերյալ նյութերը և XVI դարի նշանավոր բանաստեղծ, նկարիչ և գրիչ Հովասափ Սեբաստացու բանաստեղծությունները հավաքելու համար։ Նա նյութեր է հավաքել նաև միջնադարյան նշանավոր բանաստեղծ Ֆրիկի վերաբերյալ՝ Տիրայր վարդապետի համար։*

*Նամակներից պարզվում է նաև, որ Գ. Հովսեփյանը ցանկություն է ունեցել միջնադարյան հայկական մանրանկարչության պատմության վերաբերյալ պատրաստած իր ուսումնասիրությունը Բեռլինում տպագրել, որը չի հաջողվել 1914 թ. համաշխարհային պատերազմի պատճառով։*

*Վերջին նամակը տեղեկություններ է հաղորդում 1920 թ. հունվարին Ալեքսանդրապոլում հիմնադրված համալսարանի մասին, որ իր գոյությունը պահպանեց միայն մի քանի ամիս։*

*Նամակները հրապարակվում են մասնակի կրճատումներով։*

Ա. Հ. ԱԴԱՄՅԱՆ.

# ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

## 1

*Սիրելի Տիրայր վարդապետ.*

*Երեկ ստացա նամակդ. հանձնարարությունդ բոլորը կկատարեմ. Ֆրիկի գործեր այստեղ բավական կա, միայն մինչև օգոստոսի 20-ը ստանալ չես կարող։ Այսօր օգոստոսի 12-է, մի քանի օր կտևև մինչև հանձնարարությունդ կատարելը, ուրեմն էլ ե՞րբ քեզ հասնի։ Այս երկտողը գրում եմ քեզ, որ իմանաս, թե նամակդ ստացել եմ և ցանկությունդ կկատարեմ, կուղարկեմ դարձյալ Քիշինև, թող սրբազանը քեզ հասցնե, ուր որ լինիս։*

*Ես էլ մտածում եմ Վենետիկ գնալ, մի երկու կարևոր ձեռագիր կա տեսնելու և մի երկու լուսանկար առնելու, բայց փող չունեմ։ Եթե գնալս չհաջողվեց, քեզ պետք է խնդրեմ այդ ձեռագրաց մասին տեղեկություն տալ և մի երկու լուսանկար առնել։ Այդ ձեռագիրներն՝ այսպես կոչված Տրապիզոնի ավետարանը, որ Ժ դարու գործ է համարվում, Վարդա ավետարանը ԺԱ դարու գործ։ Պետք է արտագրել հիշատակարանները, եթե ունին, տալ համառոտ նկարագրությունը, պատկերներից, գրերից և զարդերից մի երկու բնորոշ լուսանկարչական պատկերներ։ Դորանով գուցե կարող կլինեմ բավականանալ։*

*Նյութ այստեղ շատ կար և ընտիր, Եղիշեն կաշվից դուրս եկավ և նկարեց կրկնապատիկ ավելի, քան հնարավոր կարելի էր համարել։ Հատկապես, ուշադրության արժանի է Գագիկ Բագրատունու՝ Կարսի վերջին թագավորի ավետարանը։ Արքայական և իշխանական շատ ընտիր ձեռագիրներ կան և Կիլիկյան շրջանից, իրենց ստացող թագավորների պատկերներով։ Արտանկարել է Գագիկ Բագրատունի, Լևոն Գ յուր ընտանիքով, Վասակ արքաեղբոր յուր որդվոց հետ, Մարիան թագուհի և ուրիշ զարդեր։ Լուսանկարչական պատկերներ հանել եմ տվել մոտավորապես 60 հատ, միջոցներս չեն ներում ավելի ազատ շարժվել։*

*Եղիշեն ամսույս 9-ին հանապարհ ընկավ Եգիպտոսի վրայով, ես կմնամ մինչև ամսույս վերջերը, այնուհետև անելիքս դեռ որոշ չէ, բայց հավանորեն Պոլսի վրայով էջմիածին կդառնամ։ Պոլսում տեսանք Օրմանյան սրբազանին. առողջ է և լավ աշխատում է։ Տաճկաստանցոց մեջ տրամադրություն չկա նրան ընտրելու. դաշնակցականները շատ դեմ են և միջոցների մեջ խտրություն չեն դնիլ. իսկ այստեղ նրանք դեռ ույժ են։*

*Քո Գարեգին վարդապետ*

*12 օգոստոսի 1911 թ.։*
*Ս. Երուսաղեմ*

*Հ. Մեսրոպ Նշանյանն այժմ մոտս, բարևում է։ Հայտնեց, որ ինքն է արտագրել և Զորանյանին ուղարկել Ֆրիկի բոլոր երգերը, եթե դու Զորանյանից ես ստացել, իմանաս և առաջաբանիդ մեջ հիշես։*

Մատենադարան, Ա. Հովհաննիսյանի արխիվ, թղթ. № 244, վավ. № 197։

2

Սիրելի Տիրայր վարդապետ.

Բոլոր հարցերիդ պատասխանեցի, բացի մեկից, որ հնարավորություն չունեմ. այսինքն՝ թե քանի՞ տաղարան կա այստեղ։ Գրատան ցուցակը կորել է կամ գողացել են՝ չգիտեմ, իսկ առանց ցուցակի հնարավոր չէ մոտ 3000 ձեռագիրների մեջ որոշել որո՞նք են տաղարանները։ Բացի քո նշանակած ձեռագիրներից, որոնց մասին տեղեկություն ունեի և ես այստեղի համառոտ ցուցակից, ուրիշը չգտա։ Հ. Մեսրոպ վարդ. Նշանյանը, որ Զոբանյանի խնդրանոք գբաղվել է այդ խնդրով, արտագրել և իրեն ուղարկել, վկայում է, որ Ֆրիկի ուրիշ տաղեր այստեղ այլևս չկան։

Այժմ գանք իմ փորի ցավին։ Եթե դրամական միջոցս ներեր, ինքս Վենետիկ կգայի մի քանի շաբաթով։ Բայց այսպիսի հարմար առիթն էլ որ դու գնում ես, մի մեծ հաջողություն է։ Քեզ կխնդրեմ՝ ա. Տրապիզոնի կոչված ավետարանի համառոտ նկարագրության և պատկերների ու ծաղկագրերի մի քանի լուսանկարչական նմուշներ տաս։ Այդ ավետարանը Ժ դարու է համարվում, չգիտեմ որքան հիմնավոր, և ծաղկագրեր ունի, որ անսովոր երևույթ է մեր ձեռագրերի մեջ։ բ. ԺԱ դարի ձեռագիր է Վարդի ավետարանը, դորա մասին էլ նույն տեսակ տեղեկություններ։ գ. Մլքե թագուհու ավետարանի խորաններից այն տեսարանը, ուր նավակի մեջ ձկնորսներ կան և ջրի մեջ կոկորդիլոս է երևում։ Լուսանկարչական ծախք ինչքան կլինի, կգրես էջմիածին, կուղարկեմ։ Հուսամ, թե խնդիրքս կկատարես և ինձ մի մեծ դժվարությունից ազատած։ Հ. Դաբրիել Նահապետյանցին շատ ողջույններ, նորա օգնության դիմիր և իմ խնդիրների համար։ Նախապես շնորհակալություն։

Քո Գարեգին վարդապետ
15 օգոստ(ոս) 1911 թ.
Երուսաղեմ*

Մատենադարան, Ա. Հովհաննիսյանի արխիվ, թղթ. № 244, վավ. № 199։

3

Սիրելի Տիրայր վարդապետ.

...Ի սրտե ուրախ եմ, որ Ակադեմիան հանձն է առել տպագրել ցուցակդ ու Ֆրիկդ. գիտեմ, որ միջնորդն ու հաջողացնողը Մառը կլինի։ Մեր լրագրական հերոսները դատապարտության արժանի վարմունք ցույց տվին դեպի այդ մարդը, որ մեր կատարյալ երախտագիտության է արժանի։ Հույս ունեմ, որ այսուհետև այդպիսի անմիտ հոդվածներ և թղթակցություններ չեն տպվիլ «Հորիզոնի» մեջ. անձամբ խմբագրատուն գնացի և մանրամասն բացատրություններ տվի, ցույց տալով այդ արշավանքի անհեթեթությունները ու վնասակար կողմերը։ Տարաբախտաբար չկարողացա գրավոր կերպով մատչելի դարձնել

* Այս նամակի մյուս էջերում Գ. Հովսեփյանը նշել է Երուսաղեմի հայերեն մի քանի ձեռագրերի համարները, դրանց գրության տարեթվերը, գրիչները, բովանդակությունները։ Ինչպես երևում է, նշել է այն ձեռագրերը, ուր եղել են Ֆրիկից տաղեր։

ընդհանուր հայ հասարակության, որ խոստացան առանց փոփոխության տպագրել «Հորիզոնի» մեջ։

Քիչ տկար եմ և տրամադրությունս վատ։ Հարկավոր է գործիս տպագրության ծախսերի պակասը լրացնել, բայց ոչ ոքի դիմել չեմ կարողանում. ընդհանուր խոսքերով ամենքը համակրություն են հայտնում, բայց իրական օգնությունը քիչ։ Նույնիսկ դասախոսությանս հաջողությունը կասկածելի է թվում, իսկ ոչինչ անել չեմ կարող, ուրիշներն էլ զբաղված են իրենց գործով։ Տեսնենք ինչո՞վ կվերջանա։

Սիրալիր ողջույններով՝ քո Գարեգին վարդապետ

.8 ապր[իլ] 1914 թ.
Մոսկվա

Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. № 132, վավ. № 266։

4

Սիրելի Տիրայր վարդապետ.

Ողջամբ ժամանակին հասել եմ Բեռլին և հենց երկրորդ օրը մատենադարան գնացել քո նշանակած Ֆրիկի տաղը որոնելու, բանից դուրս է գալիս, որ 84, 96ա Քարամյանցի ցուցակինն է, միայն առանց Ֆրիկի անվան։ Այդ տաղը նույնությամբ արտագրած ուղարկում եմ քեզ։ Քարամյանցի ցուցակից դուրս միայն յոթ ձեռագիր կա, նրանք էլ կնայեմ, եթե տաղարան լինի և Ֆրիկի անունով որևէ բան, կարտագրեմ, կուղարկեմ։

Այս ամբողջ շաբաթն այստեղ մատենադարանում աշխատում էի կամ այցելություններ անում. երեկ միայն սկսել եմ իմ իսկական գործով զբաղվել, եղել եմ երկու նշանավոր ֆիրմայում, վաղն առանձին առանձին մարդիկ պիտի ուղարկեն աշխատությունս տեսնելու և նախահաշիվ կազմելու։ Չոբանյանը Մասեհյան խանի միջոցով մի քանի մանրանկարներ էր ուղել այստեղի մատենադարանի Աղեքսանդրի վարուց մի ձեռագրից, որ գրված է Հովասափ Սեբաստացու ձեռքով։ Ես հանձն առա կատարել նորա խնդիրքը և հինգ օր հենց այդ ձեռագրով էի զբաղված, որ հետաքրքիր էր ինձ համար և մանրանկարչական և գրական տեսակետով։ Այստեղ հավաքված է հեղինակի ձեռքով Սեբաստացու տաղերը, եթե ոչ՝ ոք ձեռք չի տվել, գրեցի Չոբանյանին, բոլորը նկարել կտամ և հետս կվերցնեմ։

Այսօր ժամադիր եմ եղել հայագետ Մարկվարտին, պիտի տեսության գնամ և ծանոթանամ։ Թատրոն և նման զվարճության տեղեր չեմ գնացել դեռ, մենակ եմ. մեկ էլ գործս՝ փոքր ինչ կարգի ձգեմ, որ հետո ազատ շունչ քաշել կարողանամ։

Հուսով եմ, թե դու էլ Պետերբուրգի տքնությունից հետո, հիմա հանգստացած և առօրյա զբաղմունքներիդ կպած կլինես։ Գրիր Berlin-Wilmersdorf, Brandenburgische str 22 I Dr. James Greenfield-ի հասցեով, ինձ կուղարկե։

Քո Գարեգին վարդապետ
Բեռլին, 10 մայիսի 1914 թ.
Երկու օրից Լայպցիգ կերթամ։

Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. № 132, վավ. №277։

5

Սիրելի Տիրայր.

Բեռլինի ամենանշանավոր ֆիրմաներից մեկի՝ Albert Frischer-ի հետ համաձայնության ենք եկել, այսօր վաղը կստորագրենք պայմանները և ապա Վիեննայի վրայով ճանապարհ կընկնեմ Պոլիս։ Շատ ժամանակ տևեց մինչև կարողացա գործին փոքր ինչ ծանոթանալ և տպագրության ավելի լավ եղանակն ընտրել, պետք է Zrchtdruck շարս գունին տպագրությամբ։ Միայն պատկերներից տպագրությունը 32400 մարկ, տախտակների և թվանշանների տպագրությունն էլ, որ 600 մարկով գլուխ գա, գոհ եմ։ Ապա կազմը մի քանի հազար մարկ պիտի նստի։ Այսքանը միայն պատկերները առանց բնագրի։ Բայց աստուծով գլուխ կբերեմ, եթե առողջ մնամ։ Զոբանյանին Մառին վերաբերյալ խնդրի հետ ծանոթացնելը բավական դժվար գործ է, ահագին պատմություն է, նամակով ինչպես բացատրեմ այդ բոլորը, գուցե ավելի դյուրին կլինի, որ Պոլսում անձամբ խոսեմ, բայց և այնպես Զոբանյանին կգրեմ։

Մեր Գևորգ վարդապետից պատկերները չստացա, չնայելով Լայպցիգից հեռագրով հայտնել եմ Գրինֆելդի հասցեն. նորից հեռագրեցի։ Քո խնդրած գրքի դինը կաշխատեմ իմանալ, նորից Լայպցիգ պիտի գնամ երկու օրով և գրավաճառների հետ գործ ունիմ, բավական թանկարժեք գրքեր գնեցի հայ արվեստի, հնագիտության, ժամանակագրության վերաբերյալ։ Բոլորովին դատարկ գրպանով տուն կվերադառնամ, եթե ոչ պարտքով։ Մինչև այժմ նեղություն չեմ քաշել, ապրել լավ, չզրկելով ինձ թատրոնից, կոնցերտից և առհասարակ զվարճություններից, բայց ավելի երկար այլևս դիմանալ չեմ կարող, նյութական միջոցներս սպառված են։ Հովասափ Սեբաստացին լուսանկարել տվի, մի մասն էլ արտագրեցի, այդ էլ լավ եղավ, միջանկյալ այդպիսի մի աշխատություն ձեռք բերելով։ Ձեռագիրը միայն պակասավոր է, չգիտեմ ուրիշ ընդօրինակություններ կա՞ն, հնարավոր պիտի լինի՞ լրացնել։

Պողոս-Նուբար փաշան եկել է Բեռլին, դեռ չեմ տեսել, այցելության պիտի գնամ և ծանոթանամ։

Հունիսի 16-ին հայ-գերմանական ընկերության հաստատության հայտարարության տոնն էր. ես էլ գերմաներեն մի համառոտ զեկուցում կարդացի հայ արվեստի մասին, ընտիր հասարակություն կար գերմանացիների կողմից, բոլորը հայտնի գիտնականներ և անձնավորություններ։

Տրամադրությունս լավ չէ, միայն հոգս է պատճառում ինձ Հռիփսիմեի վանքը. չիմացա ինչ դրության մեջ է, Անտոն վարդապետը գա, մնա, ուզում եմ նույնիսկ հրաժարվել։ Մի երկու տարի պետք է ես ազատ լինեմ, որպեսզի կարողանամ այս ծանր բեռը հաջողությամբ մի կողմ դնել, վերջացնել։

Քո Գարեգին վարդապետ

20 Հունիսի 1914 թ., Բեռլին, Գրիր Պոլիս, պատրիարքարան։

Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. № 132, վավ. № 227²

7

Սիրելի Տիրայր վարդապետ.

Նամակդ այսօր միայն ստացա. Հովասափ Սեբաստացու տաղերն ու մյուս գրվածքները արտագրում եմ կամ լուսանկարում, որպեսզի պատրաստեմ տպագրության. ես կարծում էի Զոբանյանը կկամենար հրատարակել, նա օգտվում է միայն մասնակի ֆրանսերեն ոի աշխատության համար։ Բայց ինչ կապ Ֆրիկի և Հովասափ Սեբաստացու մեջ. վերջինս 1535 թվականների մարդ է, այնինչ քո քննությամբ Ֆրիկը ԺԳ դարու վերջին պիտի ապրեր։ Համենայն դեպս հարկավոր նյութերը հավաքում եմ ես, կիսատ է մնացած Լայպցիգ գալուս պատճառով, վերադառնամ կշարունակեմ և հարկավոր ժամանակ կարող ես օգտվել։

Ղուկասյանին նախահաշիվ ուղարկեցի, և մարդը հեռագրով հայտնեց, թե 25000 մարկի չափ տրամադրել է բնագրի և պատկերների տպագրության համար։ Այդ հոգսից այդպիսով ազատ եմ և տպագրության խնդրով կարող եմ զբաղվել։ Բեռլինում մոտավոր նախահաշիվ կազմել տվի, 35000 մարկ են նշանակում միայն պատկերների համար, բայց կարծում եմ մի բան պակաս դուրս կգա, եթե ճիշտ չափագրության և հաշվի ենթարկենք։ Այդ նպատակով այժմ գեղարվեստի ճեմարանի երկու աշակերտի հետ պատկերների ուրվագիծն ենք պատրաստում և տախտակներ կազմում, որպեսզի թե՛ ճիշտ հաշիվ կարելի լինի անել և թե՛ տպագրության ժամանակ սխալներ չպատահեն։

Էջմիածնից մեր Անտոն հայր սուրբը շտապելով շտապեցնում է, բայց անդադար աշխատելով հանդերձ, դարձյալ հնարավոր չէ գործն ավելի արագ առաջ տանել, քան կատարվում է։

Քո Գարեգին վարդապետ*։

Գրել կարող ես դարձյալ Grienfield-ի հասցեով, կամ Վիեննա հ. Ակինյանին՝ ինձ հասցնելու համար։

Սատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. № 133, վավ. № 375։

7

Սիրելի Տիրայր վարդապետ.

Քո գրքի տպագրությունը առ ժամանակ պիտի հետաձգվի, ընտրած թուղթը մինչև կստացվի։ Զեռագրիդ վերաբերմամբ ոչ մի վտանգ լինել չէ կարող, կուղարկես ինձ և ես մաս մաս տպարանին կհանձնեմ։ Կգրեմ քեզ, երբ թուղթը պատրաստ կլինի։ Ճեմարանի տեսչության փոփոխության վերաբերությամբ խոսք կա, մի ժամանակ քո մասին էր լսվում, մանրամասնություններ դրել է քեզ Մուշեն, չեմ երկրորդում։ Բայց մի քանի օր է կաթողիկոսը կանչել է և առաջարկում է անպատճառ ընդունել տեսչությունը. ես երկիցս քո մասին խոսեցի, առարկելով, որ իմ աշխատություններս լրացնելու համար ինձ ավելի ժամանակ է հարկավոր և այլ պատճառներ, բայց նա պնդում է, որ հանձն առնեմ, ես ժամանակ եմ խնդրում և առ ժամանակ պատասխանը կուշացնեմ,

* Նամակի թվականը չի նշված, պետք է գրված լինի 1914 թ. արտասահմանից։

եթե հանձն առնելու կողմը հակվիմ, արդյո՞ք կկամենաս գործակցել ինձ ճեմարանում։ Ինձ այնպես է թվում, թե քեզ համար էլ օգտակար կլիներ Էջմիածնում լինել և մատենադարանում ազատ ժամերին աշխատել։ Շատ հեռու մնալով էլ բան չի լինիլ. «աչքով հեռու, մտքով հեռու»՝ ասում է ժողովրդյան առածը։ Կաթողիկոսը ինձ խոսք է տվել նաև Շողակաթի հրատարակության մասին, ուրեմն և մի գիտական հանդես կունենանք, որի շուրջը խմբվել կարող են բանասիրական աշխատության ընդունակ միաբաններս։

Պատասխանիր այս հարցին, և ընդհանրապես գրիր քո կարծիքը, թե պե՞տք է հանձն առնել ճեմարանի տեսչությունը, թե հեռու մնալ։ Համենայն դեպս ես առանց որոշ պայմանների հանձն չեմ առնի, լսարանները պետք է բարձրացնել, մասնագետ ուսուցիչները հրավիրել և պատրաստել բավարար ռոճիկով և քիչ դասերով, բյուջեն պետք է բարձրացնել, հատկապես լսարանների համար, տեսչությունը պետք է հաստատվի երկար տարիներով և այլն, եթե այս և մի քանի ուրիշ կարևոր պայմաններ կոնդակի մեջ կմտնեն, այն ժամանակ միայն կարող եմ հանձնառության մասին մտածել։

Առողջությունս այժմ լավ է, դասերի գնում եմ, բայց դեռ կատարելապես կազդուրված չեմ, շուտ հոգնում եմ և անկարող եմ մտավոր, լուրջ աշխատանք սկսել։ Երևի, մինչև զատիկ բոլորովին կապաքինվեմ, հիվանդությունս բավական ծանր է և երկար, բժիշկը մի առժամանակ երկյուղ է հայտնել, երբ տաքության աստիճանն սկսել է շատ մեծ փոփոխության ենթարկվել, երեք օր բոլորովին լուռ վեր ընկած եմ եղել և Անտոն վարդապետը յուր հույսը բոլորովին կորցրել է։ Բարեբախտաբար կարողացա լավ, անձնվեր հիվանդապահ վարձել։

Քո Գարեգին վարդապետ

12 մարտի 1915 թ.
Ս. Էջմիածին

Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. № 126, վավ. № 402։

8

Սիրելի Տիրայր Սրբազան.

Ողջամբ և առանց դժվարության հասանք Ալեքսանդրապոլ և տեղավորվեցանք Արտակ վարդապետի մոտ, այստեղ է և պրոֆ. Ղամբարյան, այստեղ էին ճաշում և բոլոր դասատուները, այսպիսով առաջնորդարանը կեդրոնն է համալսարանի վարչության և դասատուների։ Արդեն կազմակերպված է ֆակուլտետը, դեկան է նշանակված Մեսրոպ եպիսկոպոս պրոֆեսորի տիտղոսով, նույն տիտղոսն ստացել է Երվանդը, ես, Մանուկն ու Մալխասյանը դոցենտի պաշտոն ունինք, իսկ մնացածները դոցենտի պաշտոնակատար կամ պրիվատ դոցենտ։ Այս տիտղոսները կամ պաշտոնները նշանակված են ավելի ձևական հիմունքներով. Ղամբարյանն իմ վերաբերմամբ հայտնեց, որ թեև աշխատությունների հիման վրա կարելի էր և ինձ պրոֆ. պաշտոն տալ, բայց որովհետև ինքը կոմպետենտ չէ իմ աշխատություններով չափելու, ուստի առ ժամանակ թողնում է, մինչև ֆակուլտետն ինքը հնարավորություն կունենա աստիճան կամ պաշտոն տալու, կամ դրսի հեղինակավոր մասնագետների կարծիքն իմա-

նալու։ Ես, ի հարկե, հայտնեցի, որ ինձ համար առանձին նշանակություն չունի, մանավանդ ես պատրաստ աշխատություններ ունիմ, որ կարող եմ հենց այս սեմեստրի ընթացքում կամ վերջում ֆակուլտետին ներկայացնել։ Ինձ հանձնված է հայ արվեստի և հնագրության աթոռը, հույս ունիմ, թե հավաքածքս նյութերով և ջանասիրությամբ սևերես չեմ մնա. այս սեմեստրին պետք է գրչության արվեստի մասին խոսեմ, որ գրած պատրաստ է։ Այս չափս իմ անձի հետ կապված նորությունները։

Երևի լսած կլինես, որ համալսարանի բացումն ուշացած է, նշանակված է ամսույս 31-ին, եթե բոլոր հրավիրյալները ներկա լինեն, մեծ բազմություն կլինի։ Կազմված են ճառախոսների ցուցակը և հանդեսի ծրագիրը, մոտավորապես ժամը 11-ին կլինի բացման հանդեսը, ժամը 4-ին բանկետ, իսկ երեկոյան բալ։ Կիրակի օրը պրոֆ. Ջավարյանը զեկուցում կանե համալսարանի բացման պատմության և ապագա լրիվ կազմակերպության մասին, իսկ երկուշաբթի կլինի միայն մի հանդիսավոր դասախոսություն Մալխասյանի կողմից, երեքշաբթի կսկսվեն կանոնավոր մյուս դասախոսությունները ցուցակի համաձայն։

Հովասափ Սեբաստացու սրբագրության հենց առաջին երեսում, ծանոթության մեջ չի նշանակված Բազմավեպի և Հանդես Ամսօրյայի այն երեսները, որտեղ Մառի աշխատության մասին գրախոսություն կա. ամիսները պետք է լինին հունիս և հուլիս, բայց չգիտեմ, որի՞նն է հունիսը և որին հուլիսը. խնդրեմ այդ նեղությունը հանձն առնես, ստուգես ամիսները կամ երեսները, որպեսզի պակասավոր չլինի տպագրության մեջ, իսկ եթե այդ անկարելի կլինի՝ միայն տարին։ Դյուտին խնդրել եմ 25 օրինակ արտագրություն տալ, հիշեցրու, չմոռանաս...

Հուսամ թե կազդուրվել ես բոլորովին և տրամադրությունդ էլ փոխված է դեպի լավը։

Ողջ լեր։

Քո Գարեգին եպիսկոպոս։

28 հունվարի 1920 թ.

Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ № 126, վավ. № 384։

## НЕСКОЛЬКО НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ ГАРЕГИНА ОВСЕПЯНА

А. А. АДАМЯН

(Резюме)

Известный арменовед Гарегин Овсепян (1867—1952) в 1911 и 1914 гг. выезжал из Эчмиадзина в Иерусалим, Москву, Берлин, Константинополь и другие города с целью изучения хранящихся там армянских рукописей. Публикуемые письма, написанные им в этот период, содержат важные сведения о деятельности Г. Овсепяна.